«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Նախադպրոցական փուլի կազմակերպման նպատակները ու իրականացման ուղիները

Հետազոտող ուսուցիչ՝ Հովհաննիսյան Քնար

Դպրոց՝ <<Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

Նախաբան

Հետազոտական համատեքստ

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Տվյալների մշակում և վերլուծություն

Եզրակացություն

Գրականության ցանկ

Նախաբան

«Աշխարհում ամեն ինչ սկսվում է սիրուց »

«…»

Ներկա օրերում կրթական բարեփոխումները ժամանակի հրամայականով անդրադառնում են կրթության բնագավառի կառուցվածքային բոլոր օղակներին ու կողմերին: Արդեն նկատելի տեղաշարժեր են կատարվել գրեթե բոլոր առարկաների ոլորտներում: Եվ, սակայն հանրակրթական դպրոցի առարկայացանկում առանձնանում են այնպիսի առարկաներ, որոնց կառուցվածքի ու բովանդակության վերափոխման խնդիրների շուրջ շարունակվում են բանավեճերը: Այդպիսիք են «Մայրենին», «Կերպարվեստը», «Տեխնոլոգիան» և այլն:

Յուրաքանչյուր առարկայի նորօրյա հիմանահարցերն ուսուցիչը պետք է կարողանա համադրել յուրովի և դրսևորել բարձր մանկավարժական կարողություններ:Ուսուցիչը պարտավոր է աշակերտին զգալ տալ մեր լեզվի համն ու հոտը, կշիռն ու արժեքը , գույնն ու երանգը , ձայնն ու լռությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ է մանկավարժի արվեստն ու վարպետությունը զուգակցել սրտացավության և իմաստության հետ: Նախաայբբենական փուլից սկսած պետք է այնպես աշխատել, որ փոքրիկը սիրով ու հաճույքով դպրոց գա և հաղթահարի իր առջև եղած դժվարությունները: Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանական հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է:

Այս բոլոր որակներն ապահովելու համար ուսուցիչը պետք է ընդունակ լինի մոտենալ աշակերտին լավատեսորեն, կարողանա կառավարել սեփական տրամադրությունը, դիմախաղը, ձայնը, լինել հուզականորեն վարակիչ:

Ահա շփման այն միջոցները, որոնք անհրաժեշտ են ուսուցչին.

- ձայնի կուլտուրա, տեմբր, ինտոնացիա, տեմպ, բարձրություն, մեղեդայնություն;
- ծիծաղ, ուսուցչի արտաքին կերպար, վարքային դրսևորումներ;
- ժեստեր, դիմախաղ, ֆիզիկական կեցվածք, գործողություններ, տեսողական շփում;
- տեղաշարժումներ տարածության մեջ:

«Ուսուցչի գործունեությունը, ինչպես և դերասանինը, պահանջում է բարձր սոցիալական կուլտուրա: Այդ պատճառով անհրաժեշտ է անընդհատ պարապել, վարժվել և զբաղվել ինքնադաստիարակությամբ»:

«Ճանաչի՞ր ինքդ քեզ, քո բնությունը և դաստիարակվի՞ր»:

Ներածություն

«Յուրաքանչյուր երեխայի սրտի ինչ-որ անկյունում՝ ամենամեծ նվիրական տեղում, իր զգացմունքների լարն է գտնվում: Եվ այն հնչում է յուրովի: Որպեսզի նրա սիրտն արձագանքի իմ խոսքին, ինքս պետք է լարեմ՝ նրա լարին համապատասխան»:

Սուխոմլինսկի

«Ասա՛ ինձ, և ես կլսեմ ցու՛յց տուր ինձ, և ես կհիշեմ, մասնակից դարձրո՛ւ, և ես կհասկանամ: »

Չինական ասացվածք

«Ուսուցչի հաջողության գաղտնիքը, երեխաների տեսակետը հասկանալու, և իրերը նրանց տեսանկյունից դիտելու ունակության մեջ է »:

<<Յուրաքանչյուր երեխա ինչ որ չափով հանճար է և յուրաքանչյուր հանճար՝ ինչ որ չափով երեխա>>:

Ա.Շոպենհաուեր

<<Առաջին հերթին բանավոր խոսքով պետք է հարստացնել երեխաների մտքի բովանդակությունը: Խթանել ճշգրիտ մտածողության, արժեքավոր մտքերի առաջացման և համախմբման կարողությունը: Այս ամենի բացակայության դեպքում մայրենի լեզուն կորցնում է իր արժեքը»:

Է. Ի. Տիխեևա

- ❖ Ուսուցումը կազմակերպվում է համագործակցային մթնոլորտում, ուր և՛ երեխան, և՛ մանկավարժը նույն հարթության վրա են, գործունեության սուբյեկտների դերում:
- ❖ Մանկավարժը խորհրդատու է, ուղղորդող, օգնական, ավագ ընկեր:

Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակներն ու իրականացման ուղիները

Նախաայբբենական շրջանի դասերը կառուցվում են հաշվի առնելով դպրոց նոր ոտք դրած երեխաների տարիքային առանձնահատկությունները, մասնավորապես ուշադրության և հիշողության առանձնահատկությունները: Այդ փուլում տարվող աշխատանքների հաջող կազմակերպան համար շատ կարևոր է դպրոց ընդունվող երեխայի նախապատրաստումը դպրոցական կյանքին ու կանոններին:
Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով: Ուսուցիչն իր աշխատանքն այնպես պիտի կազմակերպի, որ առաջին օրերին երեխաների համար այդ ամենի մեջ հաճելին ավելի շատ լինի, ոգևորությունն ավելի մեծ: Առաջին օրերի ուսուցողական խնդիրները լուծելու համար այդ ոգևորությունը մեզ շատ է պետք գալու: Երեխաները պետք է զգան աշխատանքի պատասխանատվությունը: Սա շատ կարևոր նշանակություն ունի ոչ միայն այս առաջին օրերի ուսուցողական խնդիրների լուծման համար, այլև դաստիարակչական տեսակետից: Սովորելու աշխատանքի պատասխանատվությունը և դժվարությունը երեխաներն անպայման պետք է զգան, սակայն դրա հետ մեկտեղ պետք զգան, որ այդ աշխատանքն իրենց ուժերին ու կարողություններին համապատասխանում է, և ուսուցիչը դժվար պահերին միշտ իրենց հետ է, և չկա որևէ դժվարություն, որ նրանք, աշխատելու դեպքում չկարողանան հաղթահարել:
Երեխաները երկար ժամանակ չեն կարողանում կենտրոնացնել իրենց ուշադրությունը, նրանք միևնույն աշխատանքից արագ հոգնում են:Գործողությունների միապաղաղությունը ձանձրույթ է պատճառում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նրանց գործունեության ձևերը փոխել յուրաքանչյուր տաս-տասնհինգ րոպեն մեկ՝ դասի յուրաքանչյուր փուլում: Աշխատանքը դասի ժամանակ կազմակեպում է այնպես, որ զրույցներն ու պատմություններն ընդատվեն ակտիվ խաղերով, ֆիզիկական վարժություններով, հանելուկների գուշակումով, նկարչությամբ, երգով, պարով և այլն:
Նախաայբբենական փուլի ճիշտ կազմակերպման համար ուսուցիչը պետք է բազմակողմանի պատրաստված լինի, հաշվի առնի ուսումնական ժամանակի յուրաքանչյուր վայրկյանը, դասը տանի մի քանի պլանով՝ նկատի ունենալով թե՛ դաստիարակչական, թե՛ կրթական աշխատանքների, թե՛ խաղի ու աշխատանքի ճիշտ զուգակցմամբ:
Ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ հիմանական հարցերը, որոնք կարևոր նշանակություն ունեն աշակերտներին ծանոթացնելու դպրոցին:

- Աշակերտների տեղաբաշխումը՝ ըստ նրանց առողջական տվյալների ու դպրոցական առողջապահության պահանջների:
- Աշակերտների փոխադարձ ծանոթացումը, որը հնարավորություն կտա համերաշխ կոլեկտիվի ստեղծման համար:
- Դպրոցական կարգուկանոնի բացատրումը, որը պետք է ուղեկցվի համապատասխան ձևերի ցուցադրումով և երեխայի մեջ վարվեցողության կանոնը դառնա կարողություն:
- Ճիշտ նստել սովորեցնելը, որը ոչ միայն առողջապահական խնդիր է, այլև երեխաների ֆիզիկական նորմալ զարգացման և դասերին ակտիվ մասնակցելու հիմնական նախապայմաններից մեկն է:

Այս ամենը անդրադառնում է երեխաների կամքի ու բնավորության ձևավորման վրա:

Որպեսզի աշակերտներին ավելի լավ նախապատրաստես գրաճանաչության ուսուցմանը, ապա պիտի հաշվի առնես, թե որքան է զարգացած նրանց մոտ խոսքը: Խոսքի զարգացումը կարևոր նշանակություն ունի թե՛ ուսուցչի համար, որը երեխաներին նախապատրաստում է գրաճանաչության, թե՛ աշակերտների համար, որոնք պետք է լավ պատմելու կարողություն ունենան:

Առաջին դասարանի աշակերտի խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչներն են՝ բառապաշարի հարստացման, խոսքի արտահայտչականության և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, իրար հետ սերտորեն կապված, դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է:

Աշակերտի բառապաշարը իր հիմանական մասով համընկնում է գրական հայերենի համապատասխան բառամթերքի հետ, տարբերությունը միայն արտասանության ու շեշտադրության մեջ է: Ուսուցչի խնդիրը պետք է լինի ուղղել այդ բառերի արտասանությունն ու շեշտադրությունն և դրանք հիմք դարձնել երեխայի զարգացման համար:

Երեխայի խոսքում եղած առօրյա, բարբառային կամ օտար բառերն ու արտահայտություններն ուսուցիչն պետք է հետևողականորեն մաքրի՝ դրանց փոխարեն առաջադրելով գրական լեզվի համարժեքները: Յուրաքանչյուր երեխայի պատրաստվածության մակարդակն ամփոփելու համար ուսուցիչը պետք է պարզի՝

- ➢ խոսելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցչին լսելու, հասկանալու, հանձնարարությունները կատարելու և միմյանց հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը;
- ➢ հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը;
- ➢ հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով;
- ➢ ունի կցկտուր, ցածրաձայն խոսք;
- ➢ ունի արտահայտիչ խոսք;
- ➢ ունի բանավոր կապակցված խոսք, կարողանում է վերարարտադրել հեքիաթները, պատմվածքները;
- ➢ հարցերի օգնությամբ, նկարների շուրջ կազմում է մեկ-երկու նախադասություն;
- ➢ չունի ամբողջական նախադասություններ կազմելու կարողություն;

- նախադասությունները թողում է անավարտ:

Նախաայբբենական փուլում կարևոր է նաև տեսողության, լսողության, կինէսթետիկ զգացողության զարգացումը, որը երեխաների ճանաչողության և մտածողության զարգացման նախապայման է: Ուսուցիչը տևական վարժությունների միջոցով պետք է զարգացնի երեխաների հնչյունային լսողությունը, առանց որի հնարավոր չէ գրաճանաչության ուսուցումը:

Նախաայբբենական փուլի խնդիրներից են նաև երեխաների գրաֆիկական տեսողության զարգացումը: Նրանք կարողանան տարբերել կողմերը՝ վերև, ներքև, աջ, ձախ, առարկաների ձևերը՝ կլոր, ձվաձև, քառակուսի, եռանկյունի, գծերը՝ ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, թեք, կլոր, կետերը, տողերն ու տառամասնիկները:

Նախաայբբենական փուլում գրաֆիկական տեսողության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն հատուկ դիդակտիկ պարագաների՝ երկրաչափական ձևերի, պարզ պատկերների, գունավոր պաստառների օգտագործումը: Պարզ պատկերների գունավորման, մանրագծման ու նախագծման աշխատանքները:

Նախաայբբենական փուլի կարևոր խնդիրներից է նաև գրամոտորային կինեսթեզիաների մշակումը:

«Այբբենարանի» նախաայբբենական փուլի հիմանական նպատակը գրաճանաչության համար անհրաժեշտ հիմք ստեղծելն է: Այն նյութ է տալիս բազմապիսի լեզվական, ճանաչողական ու դաստիարակչական աշխատանքների համար:

Նախաայբբենական փուլում տարվող աշխատանքները ուղղված են մեկ հիմնական նպատակի՝ երեխաներին գրաճանաչության նախապատրաստելուն: Այս փուլում տարվող աշխատանքերի համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում ուսումնական հարցերը: Գրաճանաչության ուսուցման համար աշակերտները պետք է որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ ունենան, տեսականորեն ու գործնականորեն նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները բաժանվում են 2 խմբի՝ կազմակերպչական և ուսումնական:

Կազմակերպչական խնդիրներ.

- նոր ուսումնական գործունեության ծանոթացումը,
- ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,
- ծանոթություն կրթական հաստատության կարգուկանոնին, դպրոցական շենքին
- ծանոթություն երեխաների իրավունքներին ու պարտականություններին ընկերներին, ուսուցիչներին և միջավայրի մարդկանց լսելու և նրանց խոսքին բարեկիրթ արձագանքելու ունակության ձևավորումը
- գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքով վերաբերվելու կանոնների յուրացումը:

Ուսումնական խնդիրներ.

- երեխաների պատրաստվածության մակարդակի ուսումնասիրում
- խոսելու, բացատրելու, հարցեր տալու, լսելու հասկանալու,
- հանձնարարությունները կատարելու, համագործակցելու և հաղորդակցվելու ունակությունների մակարդակը
- հնչյունային լսողության մակարդակը և հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունները. բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ, հնչյուններն արտասանում է որոշակի սխալներով, ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն
- բանավոր կապակցված խոսք կառուցելու կարողություն ունի իր տարիքին համապատասխան բառապաշար, անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ, կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները, կարող է առաջադրված պարզ բովանդակություն ունեցող նկարների շուրջ կազմել մեկ- երկու մտքով իրար կապակցված նախադասություններ, կարողանում է առաջադրված հարցերին պատասխանել ավարտուն նախադասություններով
- խոսքի շարահյուսական կառույցը. կարողանում է կառուցել ավարտուն, պարզ նախադասություններով խոսք, խոսքը կազմված է միայն պարզ, ոչ ավարտուն նախադասություններով, կապակցված խոսքում օգտագործված նախադասությունների միջև բացակայում են տրամաբանական,պատճառահետևանքային կապերը, չունի ամբողջական նախադասություններ կառուցելու կարողություն, նախադասությունները թողնում է անավարտ և անցնում է նոր մտքի,
- գաղափար ունենան պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին, կարողանան դրանք օգտագործել խոսքում,
- ձայնավոր և բաղաձայն հնչյունները տարբերակեն և կարողանան գունային սիմվոլի միջոցով դրանք արտահայտեն գծապատկերում,
- գիտակցեն ձայնավորի դերը վանկակազմության մեջ
- ունենան որոշակի բառապաշար և մտքերը կապակցված խոսքով ներկայացնելու կարողություն
- ունենան ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողություններ,
- կարողանան խաղալիքների և նկարների միջոցով բառերը խմբավորել ըստ ընդհանրացնող անունների / խաղալիքներ, սպասք, ծաղիկներ, մրգեր, բանջարեղեն/ և ըստ նրանց հատկանիշների / փայտից է , քաղցր է, հոտավետ է/:

Նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի և այլ լեզվական հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախաայբբենական շրջանում:

Նախաայբբենական շրջանում առաջացած խնդիրները լուծելու համար պետք է բոլոր դասերը կառուցել այնպես, որպեսզի հաշվի առնվեն դպրոց նոր ընդունված աշակերտի տարիքային առանձնահատկությունները. այդ 6 տարեկան երեխաները երկար նստել չեն կարողանում, արագ հոգնում են և չեն կարող զբաղվել միևնույն գործողությամբ: Դրա համար պետք է դասապրոցեսն այնպես կազմակերպել, որ յուրաքանչյուր փուլում աշակերտը ակտիվ լինի: Անհրաժեշտ են հետաքրքրաշարժ

և խաղային պահեր. հանելուկների գուշակում, հեքիաթների պատմում, ֆիզդաստար, բեմադրություններ, երգ, պար, ռիթմիկ շարժումներ:
Ի՞նչ ուղիներով է իրականացվում այդ աշխատանքները: Այս շրջանում աշակերտները յուրացնում են լեզվական մի շարք կարևոր հասկացողություններ՝ նախապատրաստվելով կարդալու և գրելու գործընթացին: Խոսք.
Նախաայբբենական շրջանում յուրաքանչյուր դասի ժամին աշակերտները կառուցում են կապակցված խոսք՝ մի քանի նախադասությամբ, պատմելով համապատասխան նկարը: Ինչպես այբուբենի նկարների, այնպես էլ հատուկ պաստառների շուրջ երեխաները ուսուցչի հարցերի օգնությամբ պատմություններ են հյուսում, վերարտադրում, ունկնդրում հեքիաթներ: Այս ընթացքում ուսուցիչը գաղափար է տալիս գծապատկերի մասին: Ուսուցիչն ասում է , որ պատմությունը կարելի գրել նույնիսկ առանց տառերը ճանաչելու:Ուսուցիչը գծում է մի ուղղանկյուն և ասում , որ ինչպիսի պատմություն էլ հորինենք կարող ենք տեղավորել այսպիսի տնակում՝



<u>Գաղափար նախադասության մասին</u>: Երբ արդեն երեխաները գաղափար ունեն պատմության մասին, կարողանում են վերարտադրել դասագրքի նկարները ու պաստառները, կարողանում են ինքնուրույն կառուցել կապակցված խոսք, ուսուցչի հարցերի օգնությամբ նախադասությունները պատմությունից առանձնացնելու ունակություններ պետք է մշակել: <<Հաջորդական նկարաշարերի պատմում>> մեթոդի կիրառմամբ յուրաքանչյուր նկար ըստ իմաստի և բովանդակության հաջորդում է մյուսին, և կազմվում է մի ամբողջական պատմություն: Հետագայում առանձնացնելով նախադասությունը գաղափար ենք տալիս գծապատկերի մասին: Գծապատկերի սկզբում դնում ենք հոծ և բարձր գիծ, իսկ վերջում երկու կետ : Նախադասությունը սկսում ենք մեծատառով, իսկ վերջում դնում ենք վերջակետ:

<u>Գաղափար բառի մասին</u>. Նախադասությունը վերլուծելու և նրա բաղադրիչները դիտարկելու միջոցով աշակերտներին պետք է գաղափար տալ

նաև բառի մասին, որպեսզի բառը դիտարկվի որպես նախադասության բաղադրիչ մաս, ապա որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող լեզվական միավոր: Բառի մասին գաղափարը նույնպես տրվում է գծապատկերի միջոցով: <<Կենդանի բառեր>> խաղային մեթոդի կիրառումը օգնում է ամրապնդել բառ հասկացողությունը: Այն ամրապնդելուց հետո տրվում է բառի գծապատկերը նախադասության մեջ և նշում , որ իբրև բառ հանդես է գալիս նաև օժանդակ բայը, և որ յուրաքանչյուր բառ նախադասության մեջ ունի իր ուրույն տեղը:

<u>Բառի կազմությունը:Վանկ</u>.

Բառի մասին, որպես եզրույթ գաղափար ունենալուց հետո ուսուցչուհին ծանոթացնում է վանկին: Լավ կլինի ներկայացվող բառերը լինեն բազմավանկ, որ աշխատանքը ավելի հեշտ լինի: Նկար քարտերի միջոցով ուսուցչուհին արտասանում է բառի առաջին վանկը: Երբ բառերը արդեն կարողանում են բաժանել մասերի, որոշել քանի մասերից է կազմված, ներմուծվում է վանկ եզրույթը, ասելով , որ բառի այդ առանձին մասերին անվանում ենք վանկ: Եթե մասերի չի բաժանվում, ապա միավանկ բառ է, եթե բաժանվում է մի քանի մասերի, ապա բազմավանկ բառ է:

<u>Գաղափար հնչյունի մասին</u>.

Հնչյունի գաղափարը ներմուծելու համար նպատակահարմար է ներկայացնել նկար քարտերով մի շարք միավանկ բառեր, տալ դրանց գծային պատկերը: Այսպիսով գծային պատկերները կունենան տարբեր կառուցվածք: Ուսուցչուհին պետք է կենտրոնացնի բառի սկզբի և վերջի հնչյունների վրա,որի ամրապնդումից հետո աշխատանք է տարվում բառամիջի հնչյունները լսելու վրա: Երբ երեխան կարողանում է բառի մեջ լսել հնչյունները պետք է ներմուծել հնչյուն եզրույթը:

<u>Գաղափար ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին</u>.

Բաղաձայն և ձայնավոր հնչյունները երեխաները տարբերակում են գործնական եղանակով:Նկարների ներկայացնելուց հետո սկզբում վերլուծում են կարճ բառերը,որոնք պարունակում են տարբեր ձայնավորներ: Երբ երեխան համոզվում է , որ որոշ հնչյուններ երկար են հնչում,իսկ որոշ հնչյուններ՝ կարճ, ներմուծվում է ձայնավոր և բաղաձայն հասկացողությունները, հիմնավորելով, որ բաղաձայն հնչյունները կարճ են հնչում, իսկ ձայնավորները՝ երկար:Նկար-բառի մոդելի վրա աշակերտը ցույց է տալիս հնչյունները քառակուսիների բաժանելով, իսկ ձայնավորները ներկում է կարմիր գույնով:

Գրելու նախապատրաստում:

Նախաայբբենական փուլի կարևորագույն խնդիրներից է նաև գրելուն նախապատրաստել: Դրա համար անհրաժեշտ է աշակերտի մատների ֆալանգների ամրացումը, ձեռքի դաստակի մարզումը, տեսողական հիշողության զարգացումը, տետրի մեջ կողմնորոշվելու կարողությունը, հայերենի հիմնական տառամասնիկների գրելու կարողության մշակումը, ձախից աջ գրության ապահովումը:

Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանք կատարելու համար ընտրել եմ մայրենիի դասաժամերը: Աշակերտների հետաքրքրասիրությունը և ակտիվությունը շարժելու համար ընտրել եմ ուսուցման խաղային, մտագրոհ,հաջորդական նկարաշարերի պատմում , խմբային, համագործակցային, ձնագնդի, պոպկոռն մեթոդները,որոնք նպաստում են աշակերտների աշխուժացմանը, արագ կողմնորոշմանը, կարծիքների փոխանակմանը,ինքնազարգացմանը: Հետազոտությունը կատարել եմ նախաայբբենական շրջանում մայրենիի գրեթե բոլոր դասաժամերին, քանի որ դասավանդում եմ հենց առաջին դասարանում:
https://youtu.be/PTRJyqMtiPE
Առաջին շաբաթվա ընթացքում նպատակահարմար եմ գտել կիրառել մուլտֆիլմի ցուցադրությունը, որի միջոցով պիտի պարզեի աշակերտներից յուրաքանչյուրի մոտեցումը, դիտած հեքիաթին, մտապահելը, մուլտֆիլմի ազդեցությունը երեխայի տրամադրության վրա, երեխայի արձագանքը մուլտֆիլմ դիտելիս: Հեքիաթը դիտելուց հետո հարցերի միջոցով պարզել ե, թե ով էր ուշադիր, ով էր կարողանում մինչև վերջ լսել և ով էր կարողանում ակտիվ մասնակցել քննարկմանը:
Նախաայբբենական շրջանում պատմության մասին գաղափար տալուց հետո աշակերտներին պետք է անընդհատ խոսեցնել, խոսքը զուգորդել համարժեք գործողություններով, աստիճանաբար հասնել նրան, որ աշակերտները կարողանան գրագետ և ամբողջական խոսքով արտահայտեն այն, ինչ կատարում են: Աշխատանքը շարունակվել է տեսանյութերը զուգակցելով նկար-պատմություններով: Ամեն դասի հիշեցնել դասը պատմելուց հետո, որ դա պատմություն է ամբողջական:
Ապա /հավելված 1/ .
Ո՞ր նկարներն են համապատասխանում այս նկար - պատմությանը, նշի՛ր :

Հավելված 1

Հավելված 2





Նախադասության մասին գաղափար տալու դասաժամերին օգտագործելով Հաջորդական նկարաշարերի պատմում մեթոդը, որի կիրառման դեպքում յուրաքանչյուր նկար ըստ իմաստի և բովանդակության հաջորդում է մյուսին և կազմում է մի պատմություն: Խոսք կառուցելու, երեխաների ակտիվությունը խթանելու համար նրանց ուղղել եմ հարցեր ցուցադրելով նկարը. <<Ի՞նչ է պատկերված նկարում>>, <<Ի՞նչ եք կարծում, ինչի՞ մասին է պատմում նկարը>>, <<Ինչպիսի՞ ավարտ կունենա մեր պատմությունը,եթե սկզբից վերաշարադրենք այն>>: Այսպիսով երեխայի խոսքն ունենում է սկիզբ, ընթացք և ավարտ:Ծարժական նկարներով ստեղծել ենք պատմություն ամեն նկարը մի նախադասություն է արտահայտել: Աշակերտները պատմել են նկարը , միաժամանակ շեշտը դնելով, որ այն կազմված է նախադասություններից, իսկ նախադասությունները սկսվում են մեծատառով, վերջում դրվում է վերջակետ: Ապա խաղային մեթոդով օգտագործելով նկար քարտերը ամրապնդեցինք :

Խաղի մեջ հարցադրումը հետևյալ բնույթն էր կրում,ի՞նչն է պակասում գծապատկերում:

Հավելված 3

Աշակերտները կարողանում էին արագ կողմնորոշվել և տեղադրել վերջակետն ու մեծատառի գծիկը:

Բառի մասին գաղափար տալու ժամանակ գրատախտակին գծելով գծապատկերը ծափերի միջոցով առանձնացրել ենք բառերը: Կենդանի բառեր խաղային մեթոդի կիրառմամբ դասավորվել են աշակերտներն իրենց տեղերում: Ներկայացնելով նախադասությունը բացատրել եմ երեխաներին, որ իրենք են հանդես գալու բառի դերում: Կանգնելով կողք կողքի՝ յուրաքանչյուր երեխա արտաբերում է այն բառը, որով հանդես է գալիս հենց ինքը:Իբրև բառ հանդես է գալիս նաև օժանդակ բայը: Հավելված 3-ում տրված է մի քաղաքային տեսարան, նկար-նախադասություններ և առարկայական նկարներ՝ հեծանիվ, լուսակիր, նկարիչ: Առաջին անգամ նկարի տակ տրվում է բառի գծապատկերը: Աշակերտների ակտիվ մասնակցությամբ ստեղծում ենք մի պատմություն: Նկարը պատմելուց հետո պատմությունից առանձնացնում ենք նախադասություններ: Առաջին անգամ նկարի տակ տրվում է բառի գծապատկերը: Բացատրում եմ, որ նախադասության մեջ նման բաժանումները նշանակում է, քանի բառից է կազմված այդ նախադասությունը: Պատկերը նկարի տակ նշանակում է, որ մեկ բառ է: Դա բառի նշանն է, մոդելը: Օգտագործում եմ <<Կենդանի բառեր >> մեթոդը: <<Երեխան հեծանիվ է քշում>>, << Տղան անցնում է փողոցը>>, նախադասությունների բառերն ենք որոշում երեխաների միջոցով: Կարդում եմ նախադասությունը, և 4 աշակերտ կանգնում են ըստ բառերի քանակի՝

Ձեռքին պահելով բառի մոդուլները: <<Երեխան հեծանիվ է քշում>>: Կարդում եմ <<Տղան անցնում է փողոցը >> նախադասությունը:Չորս աշակերտ ամեն մեկը բառի մի մոդուլ է ձեռքին՝ կողք կողքի կանգնելով կազմում են նախադասությունը: Ըստ կազմված գծապատկերի մեկ անգամ ևս հիշում ենք , որ նախադասությունը սկսվում է մեծատառով, վերջում դնում ենք վերջակետ: երբ արդեն երեխաներին հասկանալի է, որ նախադասությունը կազմված է բառերից, առանձնացնում ենք բառերը՝ նկարիչ՝ մեկ բառ է, հեծանիվ՝ մեկ բառ է , լուսակիր՝ մեկ բառ է: Ապա երեխաները իրենք են բերում նախադասությունների օրինակներ և հաշվում, թե քանի բառից է կազված:Նախապես ձեռքիս տակ ունեի մի քանի նախադասությունների գծապատկերներ՝ բաժանված բառերի:Ցուցադրում եմ աշակերտներին և պահանջում բերել նախադասությունների օրինակներ ըստ գծապատկերի:Հիշեցրել եմ, որ փոքրիկ քառակուսին օլժանդակ բայն է,որ կարճ բառ է և գրվում է առանձին:Ապա դասն ավելի աշխույժ դարձնելու համար խաղացել ենք շարքերով: Առաջին շարքը ասել է նախադասություններ, երկրորդ շարքից գրատախտակին գծապատկերն են գծում՝ ցույց տալով բառերը, երրորդ շարքը ասում է նախադասությունների բառերի թիվը ՝ կանգնելով ըստ բառերի հերթականության: Կրկնելով մի քանի անգամ երեխաները վարժվեցին պատմությունից առանձնացնել նախադասություններ և որոշել դրանց մեջ մտնող բառերի քանակը:
Վանկի մասին գաղափար տալու ժամանակ ծափերով բառը բաժանում ենք մասերի: Բառի մի մասն արտասանելով հետո մյուսն արտասանում է աշակերտը: Ապա այդ նույն բառը ծափերով արտասանեցին երեխաները: մեջբերեցինք եռավանկ, քառավանկ բառեր: Մասերով արտասանելով ծափեր և որքան ծափեր,այնքան մասից էլ կազմված է բառը: Մասերն ասելով՝ հարվածել ենք նաև ձեռքերով սեղանին, որքան հարվածել ենք այնքան մասերից բաղկացած էր բառը:Խմբային մեթոդի միջոցով խաղաղցել ենք խաղեր որտեղ նկարը բաժանված էր մասերի, միացնելով նկարի մասերն իրար արտասանում էին նկարի վրայի պատկերների անունները: Միավանկ բառերի նկարները տրվում էին ամբողջական, իսկ բազմավանկ բառերի նկարները մասերի բաժանված: Երեխաների համար հաճելի և հետքրքիր եր խաղերով սովորելը: <<Ո՞ր առարկան չկա>> խաղի միջոցով զարգացնելով երեխաների ուշադրությունը և տեսողական հիշողությունը, գտել ենք, թե որ առարկան չկա և քանի վանկ ունի այն: <<Արագ գտիր իմ կեսը>> խաղի միջոցով աշակերտները ասելով բառի առաջին վանկը:

Հավելված 4

Նկարի միջից գտի՛ր մեկական միավանկ , երկվանկ , եռավանկ բառեր և միացրու՛ գծապատկերին:



Հնչյունի մասին գաղափար տալուց գրատախտակի պաստառի վրա նկարներ են իրենց բառային մոդուլով : Գրատախտակի մոտ կանչված աշակերտը բառի հնչյուններն է ցույց տալիս : Բառի մոդլը գծիկներով քառակուսիների բաժանելով ստանում ենք նրա հնչյունային պատկերը: Դասարանը բաժանվել է խմբերի, քարտերի վրա նկար-բառեր են բառի մոդուլով : Պահանջվել էր ներկայացնել հնչյունային պատկերը: Աշակերտները բաժանելով քառակուսիների կատարել են աշխատանքը՝ ներկելով ձայնավորների վանդակները կարմիր գույն:

Հավելված 5

Կազմել նկար-բառի հնչյունային գծապատկերը և գունավորել ձայնավոր հնչյունը :

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տալ պատմության, նախադասության, բառի գծապատկերը:/ Խմբային մեթոդ/

Գծել հնչյունային գծապատկերները :



Ինչպե՞ս է անցկացնում իր օրը տղան
/առանձնացնելպատմություն,նախադասություն,բառ, վանկ, հնչյուն/:
/մտագրոհ,կենդանի բառեր մեթոդներ/

Եզրակացություն

Երեխաներն ամենից հեշտ լեզու են սովորում կրտսեր դպրոցական տարիքում՝ հատկապես 6 տարեկանում: Սրանից հետևում է, որ մարդու խոսքի կուլտուրան սկսվում է կազմավորվել ամենավաղ տարիքում: Դրան հաջորդում է գիտակցական շրջանը՝ դպրոցական տարիքը: Եթե աշակերտն ինչ որ բան բաց է թողել, ապա հետագայում այն դժվար կլրացնի: Մայրենի լեզուն յուրացնելու շրջան է ուսուցման տարրական օղակը: Հենց այստեղ էլ պետք է օգտագործել երեխաների այդ տարիքին հատուկ բնական լեզվամտածողությունը: Տարրական դասարաններում պետք է լուրջ ուշադրություն դարձնել համապատասխան գրագիտության վրա: Իսկ հիմքը հենց առաջին դասարանն է : Արդի ժամանակներում դպրոցում պետք է ուսումնական գործընթացն այնպես կազմակերպել, որ բացահայտվեն յուրաքանչյուր դպրոցականի անհատական առանձնահատկությունները, որ նրա համար սովորելը դառնա անհատական պատասխանատվության գիտակցում, ինքնուրույն լինելը վարքագիծ: Երեխայի համար սովորելը, գիտելիքներ յուրացնելը, կարողություններ ձեռք բերելը, դրանք հետագայում կիրառելը և հմտություններ դարձնելը մտավոր մեծ ջանքեր է պահանջում մինչև այն պահը, երբ գիտելիք ստանալու և ճանաչողության հրճվանքը դառնա պահանջ: Այսպիսով իմ առջև դնելով նպատակ՝/ հասցնել երեխաներին այն մակարդակին, որ նրանք կարողանան ճիշտ արտաբերել հնչյունները, կարողանան բանավոր կապակցված, ավարտուն խոսք կառուցել: Տարբերակեն պատմություն, նախադասություն, բառ , վանկ, հնչյուն լեզվական միավորները: Կարողանան պարզագույն գծապատկերների միջոցով ներկայացնեն դրանք/ համարում եմ կատարված : Հետաքրքրաշարժ խաղերի, բազմազան մեթոդների կիրառմամբ երեխաները հմտություն են դարձրել պատմություն, նախադասություն, բառ, վանկ , հնչյուն լեզվական միավորների օգտործումը առօրյայում: Ունեն կապակցված բանավոր խոսք:

<<Մանկավարժի համար պարտադիր է լավ այգեպանի օրինակին հետևելը>>:

Գրականություն

1. Ջ. Գյուլամիրյան << Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>, Զանգակ 2006թ.

2 Тихеева Е. И. <<Развитие детей >> М – 1981г

3 Карпова С. Н. Труве И. <<Психология речевого развития ребенка>> изд-Рос-ун 1987г

4 Վ. Սարգսյան <<Այբբենարան >>

5 Ա. Պետրոսյան <<Մեթոդական ձեռնարկ>>

6 Ա.Ե. Տեր –Գրիգորյան ՛՛Վեց տարեկան երեխաները դպրոցում՛՛, Երևան-Լույս՛՛, 1986թ.

7 Ա. Քյուրքչյան , L. Տեր- Գրիգորյան Ուսուցիչի ձեռնարկ <<Վեց տարեկան երեխաների ուսուցման առանձնահատկությունները>>: